

ՃԻԿԱՌԱՆ

Այս աշխարհին վրա Ձայիմ աղան մեկ մտածում միայն ուներ, երկու ըսես՝ չէ. ծխել: Ու մեկ հոտե մը կախորժեր՝ ծխախոտին հոտեն:

Ծխախոտն որ ունենար, ծխելն որ ըլլար, երանության մեջ կզգար ինքզինքը այլևս: Ալ աշխարհը տա՞կն էր անցեր, թե՞ վրան էր ելեր հոգը անգամ չէր:

Ուտելը, ինչպես ըլլար, կըլլար: Ձեռքի մը չափ ցամաք հացով, չոր հացի բրդոջքները ջուրի մեջ թաթախելով ալ կգոհանար, ան, չըլլար՝ անոթի ալ կպառկեր, Այս փորը խոսք կհասկնար, վերջապես, միայն թե՛ ծխելը ըլլար, անոր չէր դիմանար:

Այն օրերուն ծխախոտը քանի՞ փարայի խոսք էր: Լազերը Տրապիզոնի գավառներեն, մորթիներով զինված, տասնհինգ, քսան ձիու բեռներով կբերեին ամեն անգամուն: Բեժին չկար՝ ըսել էր, կամ ավելի ճիշտը, քաղաքներուն մեջ գոյություն ուներ միայն: Մեկ խումբը կմեկներ, մյուսը կհայտնվեր: Անոնք իրենց բեռները կիջեցնեին, կբանային հակերը, ու առուծախը ազա՛տ, աներկյո՛ւ էր: Մեպիլուլլահ... Գնե՛ որքան որ կուգես ու գինը ինչքա՛ն աժան. լիրը, այսինքն վեց օխան, տասներուրդ դուրուշ, դու ըսե՛ ամենեն բարձրը՝ քսանչորս դուրուշ:

Բայց Ձայիմ աղան գյուղին ամենեն աղքատն էր: Վաստկվոր չէր, ձեր ալ ըլլալով՝ ո՞վ կկանչեր զինքը ու օրավարձքով կաշխատցներ: Այնպես որ՝ սև մեթալիկ մը, պղինձ մը իսկ չկար ծոցը՝ ծխախոտի տալու: Աչքը շարունակ իմ ու քու քսակն ու տուփն էր, կսպասեր, թե ո՞վ պիտի ճիկառա մը երկնցներ իրեն:

Ձմեռ որ գար՝ օտաները կերթար, օրը իրիկուն ընելու համար. Պետք է ըսել, որ թրքական գյուղերուն մեջ, բացի սակավաթիվ ունևորներե, ամեն տուն օտա չունի, շատերը միայն ներքնատունե մը բաղկանալուն այրերը չէին հավաքվեր ու նստեր, կիներուն պահվելուն, խիստ «նամեհրամ»-ին պատճառով: Գավառը անտառուտ ըլլալով փայտը առատ էր, գմբեթավոր օճախները անդադար կվառեին, ու կնստեին բոցերուն դիմաց:

Շաբաթը մեկ-երկու անգամ ալ, հեյպե մը ուներ, ուսեն կձգեր, բիրը կառներ, հին փաթեթոցը ականջներուն վրայեն կկապեր չմսելու համար, շրջակա գեղերը կերթար, գացած տեղերեն, ասոր անոր տուփերեն ճիկառա շինելով՝ կգոհացներ իր պահանջը:

Իսկ ամառ որ ըլլար՝ դուրս կուգար, ծալապատիկ կնստեր առաջքի հարթավայրին վրա իր տանը, որ գյուղին եզերքը խրճիթե ավելի նեղ ու փեթակի նման կլոր հողե բույն մըն էր, ու կդիտեր անտառուտ գառիթափերը, որոնք բոլորն ալ սահելով, կիջնային Ղուրու Չայի խորունկ ձորը:

Գյուղացիներուն անցուդարձը չէր դադրեր, Զայիմ աղա իր նստած տեղէն կ'իյնար բոլորին հետ, անոնց որպիսությունը կ'հարցներ, կ'հեաաքքրվեր, թէ ի՞նչ ընելու կերթային, և ճիկառա կուգէր:

Ահա, տեսեր ես՝ գունավոր չարշաֆներով, տրեխով կիներու, բոբիկ վագոդ մանուկներու քանի մը խումբերէ հետո՝ լուծք մը եզ առաջքը, լրծվար մը կանցներ:

– Նորեն ո՞ւր, նորեն ո՞ւր, քեռորդի, – կ'հարցներ իր տեղէն Զայիմ աղան երիտասարդին:

Զայիմ աղային համար ոչ-ազգական, օտար մարդ չկար աշխարհին վրա:

– Ղալէին կողմը կերթամ, Զայիմ քեռի, – կ'պատասխանէր, – երկու օր է՝ հոն եմ, փոսը ցանեցի, հիմա ալ վրայի մասը պիտի ցանեմ.

– Շատ աղեկ կ'ընես, դեռ ատեն կա, ուշ չսեպվիր, մինչև մայիսի վերջը կ'ցանվի, մանավանդ որ այն կողմերը քամիին դեմ է, բարձր, արևգարկ չըլլար:

– Նայինք բան մըն ալ պիտի ելլէ, Զայիմ քեռի, առջի տարի ցանած սերմնցուս ալ չառի:

– *Ճանրմ*, դուն չգիտես չէ՝ մեր մեծերուն խոսքը. *էքիճի օլ պիլիճի օլմա**, – կ'հարէր Զայիմ աղան, ավելի լրջանալով ու կրկնելով գյուղացիներու հատուկ իմաստությունը՝ թէ պետք է ցանել, ու ա՛լ չխորհիլ, մնացածը աստուծո հանձնել, ու կ'շարունակէր.

– Մի՞ թէ իմ ու քու ուզելովդ պիտի ըլլա, ինչ որ կ'ամենա՝ ան կուտա... *թեվէքելլի* եղիր... Աստված իր ծառան որ ստեղծեր է, *բըզզն* էլ հետը ստեղծած է, անոթի չթողուր... *նասիպ... նասիպէդ* ավելի չըլլար ինչքան ալ աշխատիս:

Ու կ'ավարտէր խոսքը՝ ըսելով, որ ճիկառա մը տար: Գյուղացին կերկարէր տուփը, ու Զայիմ աղան կ'փաթթէր հաստ, որքան հնար էր, հաստ ճիկառա մը, կ'վառէր, ու կ'թողուր որ մեկներ:

– Ո՞ւր, Ատը Կյուզել աղա, ո՞ւր, բոլորտիքդ ալ չես նայիր ու ինչեր ես՝ կերթաս, – իր նստած տեղէն կ'ձայներ այս անգամ, նորեն, Զայիմ աղան նոր անցորդի մը, – եկուր նստե, հոգնություն մը առ ու այնպես գնա, *ճանրմ*:

Այս Ատը Կյուզել աղան պզտիկ, շատ պզտիկ մարդ մ'է: Չորս թիզ կա ու չկա: Վտիտ: Ոտքերը տրեխ, բիր մը ձեռքը, ու վիշտ՝ դեմքին վրա:

Մարդուկը կուգար, կ'նստէր մօտը:

– Ո՞ւր, ո՞ւր կերթայիր, չես ալ ըսեր, – կ'կրկնէր վերստին Զայիմ աղան, – խոսէ նայինք՝ ի՞նչ ունիս:

Մի՞ հարցներ, Զայիմ աղա, – կ'պատասխանէր ան, – մի՞ հարցըներ:

**Սերմը գցիր ու տեր մի լինիր, (Ծ. կ.)*

Ու կպատմեր, թե դատարանն կուգար: Վեց արտավարնոց ջրարբի արտ մը իր եղբորորդիները ձեռքեն հափշտակել կուգեին, ու կկասկածեր իր հաջողութենէն, որովհետն ուխտիկցի Մովլան, Կուլանցի Մահմուտ պէկը, փանպուխձորցի Կոճո պէկը հակառակ էին իրեն:

Միաժամանակ՝ մինթանին ներքնէն ծխախոտին տուփը կհաներ:
Զայիմ աղա, առանց հրավերի սպասելու՝ հաստ ճիկառա մը շինելով ու անուշ-անուշ հոտոտելով վառելէ հետո՝ կպատասխաներ, հանդիմանական շեշտով մը.

- Չեն ամչնար այդ եղբորորդիներդ... Ինսան-օղլին հարամ կաթ է ծծեր. Ատը Կյուզել աղա, քեզի

պէս աստվածավախ մարդուն ալ կընեն... Ուխտիկի Մովլան, Կոճո պէկը ինչ ըսելով՝ երես կուտան անոնց...

- Այս աշխարհքին վրան կա, ներքն ալ կա. Այս աշխարհքէն անդին ալ կա. հոն պատասխան տալ ալ կա, Ատը Կյուզել աղա...

Զայիմ աղա ճիկառա մըն ալ կշինէր, հետո երրորդ մը նս, այս անգամ այնքան հաստ, որ թուղթին երկու եզերքները չէին միանար:

Ատը կյուզել աղան չէր նկատեր անգամ, Տուփը առնելով՝ կոյներ ծոցը ու, սրտապնդող խոսքերէն ուժ առնելով, ոտքի կելլէր ու կմեկնէր:

Այնուհետն ուրիշներ կուգային, Զայիմ աղան ամենուն հետ ալ կխոսէր, ամենքէն ալ մեկ-երկու ճիկառա կառնէր ու կճամբէր:

Ատենէ մը ի վեր, սակայն, Զայիմ աղան, նստելով սովորականին պէս՝ իր տան առաջքը, ու դիտելով արևոտ, կանաչ զառիթափերը, խոր-խոր ձորերը՝ բան մը կմտածէր. Մթանալու երթալ:

Ինք թէն մինչև այդ տարիքը դուրս ելած չէր գավառին սահմաններէն, բայց շատերը կերթային ու դրամ կորկէին իրենց տունը, վաստակով կդառնային: Ինք ինչո՞ւ չընէր: Կազատեր, այդպէսով, թշվառութենէն:

Ու բոլորին կհաղորդէր իր մտադրությունը:

- Բան մը կմտածեմ ես, աղաներ, դուք ի՞նչ կըսէք իմ այս խելքիս, - կըսէր:

- Ի՞նչ է, Զայիմ քեռի:

- Կըսեմ՝ Ստամպոլ երթամ:

- Ստամպոլ լճարմացած կնայէին, - բայց դուն Ստամպոլ երթաս՝ ի՞նչ կընաս ընել, Զայիմ քեռի, բեռնակրություն չես կընար ընել, փութերուն մեջ չես կընար աշխատիլ, նավերէն ածուխ չես կընար պարպել, ի՞նչ ընես՝ երթաս:

- Կըսեմ՝ երթամ, փարա վաստկիմ ու պոլ ճիկառա մը խմեմ, - ու այդ «պոլ...»-ը այնքան կերկնցներ, որ մեկ-երկու րոպէ կտոնէր:

Բայց այդ բանին պետք չեղավ:

Իր գյուղացի Տուրմուշ չավուշը կար, Ան Ջոնկուլտաքի ածուխի բեռնակիրներան վերակացուն, չավուշն էր, ու թեև հազիվ տարի մը կըլլար հայրենիք էր դարձեր, հանկարծ աճապարանքով կանչված էր, Տուրմուշ չավուշ պարտավորված էր իսկույն մեկնելու, բայց տունը որո՞ւ ձգեր ու երթար, Շատ արտեր ուներ, իր կինն ու մայրը չէին կրնար լեռնեն փայտ բերել, արտերը հերկել, երիտասարդ ծառա մը վարձելն ալ բազմաթիվ անհարմարություններ ուներ, քանի որ իր առաջին կինը արձակած էր ու երկրորդ կինը շաա նորատի, շատ մանկահասակ էր, ու խորհած էր Ջայիմ աղային վրան, ճիշտ է, ծեր էր ան, բայց թող ըլլար, ավելի աղեկ։

Ու Տուրմուշ չավուշ, օրին մեկը եկավ, գտավ Ջայիմ աղան, ամեն մանրամասնություն պատմեց անոր։

- Դուն շատ ես աշխատեր, քիչ ես աշխատեր, ատոր մասին մի՛ մտածեր, Ջայիմ քեռի, - ես քենե աղ չեմ փնտրեր. ինչքան աշխատիս՝ բավական է ինձի, դուն փորձառու, ալիք-մորուք ճերմակցուցած մարդ ես, միայն քու նազարդ *չոլուխ-չոճուխին* վրա ըլլա, քենե աղ կուզեմ, գիտես որ՝ *օլուր-օլմազ* մարդե չեմ ախորժիր տանս մեջ, երիտասարդ, անփորձ կնոջ տեր եմ, վերջապես։

Ու իբր վերջաբան, ավելցուց.

- Ծխախոտիդ մասին ալ դուն երբեք հոգ մի՛ ըներ. երկու լիբեն ավելի՝ տունը ծխախոտ ունիմ, քեզի համար է անիկա, որչափ կուզես ծխե, ես բացեն դրամ ալ կդրկեմ, որ նորեն գնես։ Տունը քուկդ է, մեկ խոսք, կինս ալ՝ քու աղջիկդ, դուն ինչպես կուզես՝ այնպես նայե։

Ջայիմ իսկույն ընդունեց առաջարկը։ Ան մինչև անգամ հուզվեցաւ ծխախոտի համար ըրած խոսքերեն, Ուրեմն՝ ան պիտի կրնար ծխել, ինչքան որ ուզեր։

Ու Տուրմուշ չավուշի մեկնած առտուն գնաց անոր տունը։

Այդ օրեն նոր կյանք մը սկսավ Ջայիմ աղայի համար ծառայության կյանքը։

Հերկերու ամիսը ըլլալով, ամեն առտու գույզ եզերը կառներ, ու մաստան թելին տակ՝ կերթար հերկելու։ Տասնյակներով տարիներե ի վեր արորին մաճը ձեռքը առած չըլլալով, տարիքը առաջացած, արտերը մեծ մասամբ գառիթափերուն վրա ու կարծր հողերով ըլլալուն՝ դժվարաւ կըգործածեր արորը, կհոգներ, շունչը կկտրեր, բայց ծխախոտը առատ էր, ու՝ կհանդուրժեր։ Օրը երկու անգամ տուփը կլեցներ ու կպարպեր։ Գրեթե ամեն ակոսդարձին կկայնեցներ լուծքը, ճիկառա մը պիտի փաթթեր, ծխեր, ու հետո շարունակեր։

Տուրմուշ չավուշը պատվիրած ըլլալով՝ տան մեջ կհարգէին զինքը։ Կեսուրը դիտողություն չէր ըներ, իսկ հարսը՝ մանկահասակ Ջեյնեպը, կինազանդեր, ու կօգներ իրեն։

Հերկերեն հետո Ջեյնեպին հետ խորունկ, ամայի ձորերու մեջ գացին խոտ քաղելու։ Հետո միշտ միասին՝ հունձքերը հնձեցին, կալերը կամնեցին, աղոնը

ըրին: Անծանոթներ, տեսնելով Ձեյնեպը գունավոր չարշաֆով մը ու միշտ միասին, իր աղջիկը կկարծեին:

Այսպես թե այնպես, վերջապես՝ ձմեռը եկավ, ու անգործության երկայն ամիսները սկսան: Ձայիմ աղան հիմա բոլորովին հանգիստ էր՝ Թեն տանը կիցը ու տունեն անջատ իրենք ալ օտա ունեին, բայց տանուտերը՝ Տուրմուշ չավուշը, բացակայելուն, դուռը շարունակ փակ կպահեին: Ներքնատան օճախը անդադար կվառեին ու իրենք, բոլորվելով, կնստեին դիմացը: Ծերության օրինական տարիքը թնակոխած ըլլալով՝ նամեհրամ չէին Ձայիմ աղային հետ, դրացի տուներէ կիներ, աղջիկներ նույնպէս՝ առանց ձածկվելու, կուգային կնստեին: Ձայիմ աղա հիմա ալ դուրս չէր ելլեր, կրակին կուշտը ծալապատիկ գալով՝ անուշ-անուշ կծխեր ու կմասնակցեր կիներու խոսակցություններուն:

Բայց մարտ ամսուն մեջ տանը աղը հատավ: Դեռ օդերը շատ անկանոն, խիստ էին, ձյուները մասնակի հալած, ու իրենք կխորհեին, թե մինչև ապրիլի վերջավորությունը պիտի բավեր, սակայն սխալ ելավ իրենց հաշիվը, պետք եղավ մինչև Ճերիտի աղահանքերը երթալ:

Ձայիմ աղան ու Ձեյնեպը տրեխվորեցան, պարկերն ու երկու էշերը առին: Ուրիշ կիներ ալ միացան, որոնց տուներուն աղը նայնպէս հատած էր: Կիները մինչև կրունկները քողովեցան գոյնզգոյն, թանձր չարշաֆներով, քթերնուն ձախ մասը ու ձախ աչքերնին բաց թողելով, ու գրաստներու, գեղջուհիներու կարավան մը կազմելով, ճամբա ելան: Վեց-յոթը ժամվան հեռավորություն մըն էր: Այդ օրը պիտի երթային ու հետևյալ օրը պիտի դառնային:

Ձայիմ աղան, ծխախոտը հատնելէն վախնալով, տուփը լեցնելէն զատ՝ ծրար մըն ալ առած էր միասին, Ձմռավերջի խառնակ օդերէն էր, անձրև մը պուտ-պուտ կպտպտար, գետինները ձյունոտ ու ցեխոտ, մինչև իրիկուն քալելով կրցան վերջապէս հասնիլ աղահանքերը: Յուրաքանչյուր կին իր դրամը վճարեց պաշտոնյային, աղերը լեցուցին պարկերը, Ու այդ գիշերը հողէ, խոնավ, պաղ սենյակի մը մեջ լուսցուցին:

Առտուն ելան որ՝ անձրևը վերսկսեր էր: Ամեն ոք իր աղը բեռցավ, ու մեկմեկու ետևէ առաջ շարժվեցան: Վերէն անդադար կտեղար, ու վարը, գետինները, ուր կոխէիր՝ ջուր, ամեն դիէն հեղեղներ կհոսեին, թե կիները և թե անասունները մինչև իրենց ոսկորները թրջեցան: Չէին կըրնար քալել, ոտքերնին շարունակ կսահեր, կիյնային, բայց Ձայիմ աղան չէր նկատեր անգամ ատոնք, ան հոգ մը ուներ՝ չէր կրնար ծխել: Ծխախոտին ախորժելի հոտը կհալածեր, կտանջեր զինքը, Ամեն անգամուն թաց, սառած մատներով կփորձեր փաթթել ճիկառան, ծուռ ու մուռ բան մը կըշիներ, և սակայն՝ անձրևը չէր թողուր, կթրջեր թուղթը, կմարեր, ու երկու անգամ, գոնէ, մեկ-մեկու ետևէ չէր կրնար ծուխը ներս քաշել, երբ Կոնտոսիի ու Քեռեկէի գետերուն իրար խառնված տեղը հասան, օդը ավելի խստացավ:

Անձրեր ձյունի փոխվեցավ, ու մշուշ մը իջավ, պատեց լեռներն ու ձորերը, Ալ գրեթե զիրար չէին տեսներ, Ու ամեն կին ինքզինքն ու իր էշը կհոգար, կաշխատեին ետ չմնալ:

Բարեբախտաբար՝ զառիթափերը հասան, ու մառախուղին միջեն թեև բարձունքներուն թառած գյուղը չէր նշմարվեր, բայց գիտեին, որ հետզհետե կմոտենային, երբ հանկարծ Ջայիմ աղան բան մը եղավ, գետինը ձյուններուն մեջ փոխվեցավ, ու ո՛չ կրնար խոսիլ, ո՛չ ալ շարժիլ:

Երեք կիներ իսկույն, իրենց բոլոր ուժերը հավաքելով, գյուղ սուրացին՝ լուրը տանելու: Անոնք հաստն վերջապես, եղելությունը պատմեցին, ու լսողը՝ փութաց աղետին վայրը: Գյուղացիներեն ոմանք կիներն ու գրաստները առաջնորդեցին ձյուններուն մեջեն, իսկ ուրիշները՝ Ջայիմ աղան շալկելով, տուն բերին:

Սառած մարմինը օճախին կրակին մոտեցնելը վտանգավոր ըլլալով անոնք գոմ տարին, իսկույն տաք աղբը բացին թիերով ու պառկեցուցին մեջը: Դեպքը իմացված ըլլալով, ամեն կողմէ մարդիկ կուգային՝ տեսնելու, դարմաններ հանձնարարելու: Երկու հոգի կշփեին կողերը, կուրծքը, իսկ Ջայիմ աղան զգայագուրկ, անշարժ պառկած էր:

Առաջին բուրբուխներն հետո, վերջապես, աչքերը բացավ, նայեցավ շուրջը, առանց կարենալ խոսելու,

- Ջայիմ աղա, Ջայիմ քեռի, ըսե նայինք, ի՞նչ ունիս, ի՞նչ եղավ կհարցնեին:

- Ճղ... ճղ... ճղ... ձայներ մը կըրցավ արտասանել, հոտոտելու պես ռունգերը բացիսփելով,

- Ի՞նչ կուգես, Ջայիմ քեռի, բա՞ն մը կուգես, բա՞ն մը բերենք, - կկրկնեին ամեն կողմէ, գոմին մեջ ոտքի վրա կայնող բազմութենեն:

- Ճղ... ճղ... ճղ...

Արդյոք ի՞նչ հասկցնել կուգեր: Բուլի եռացած շերպեր բերին, տաք սուրճ տվին, բայց ոչ մեկը ընդունեց, ակռաները պինդ սեմած էր:

Ամեն մարդ մեկ-մեկ կերպ կմեկներ:

Մեկը խորհեցավ, թե ճիկառա մը տային՝ կարելի է կծխեր: Ու իր միտքը հաղորդեց բազմության:

Իսկույն պառկած տեղեն բռնեցին, վեր առին, նստեցուցին, ճիկառա մը շինեցին, վառեցին ու բերանը դրին:

Ջարմացան բոլորը:

Ջայիմ աղան սկսավ քաշել ու դուրս տալ ծուխը: Ճիկառան հատցուց: Երկրորդ մը տվին, ան ալ ծխեց:

Ջայիմ աղան աղեկցավ, սկսավ խոսիլ: Գյուղացիներուն ուրախությունը չափ չուներ:

Ինք իր ոտքովը գոմեն ելավ, ներքնատունը օճախին մոտ գնաց ու նստավ:

Զայիմ աղա, Զայիմ քեռի, անցած ըլլա ի՞նչ եղար, ինչե՞ն այդպէս եղար, ճանրմ, – կհարցնէին գեղացիները, իրենք ալ շուրջը բոլորվելով՝ անոր նստելէն հետո:

Զայիմ աղան, ծանր-ծանր շուրջը նայելով ու մորուքին թելերը խառնելով, պատասխանեց.

– Մի հարցնեք, մի հարցնեք, աղաներ, որ ըսեք, թե գիտեմ՝ ես ալ չգիտեմ... առտուն, որ աղահանքերէն ճամբա ելանք, անկէ ի վեր՝ ճիկառա չեմ ծխած... քանի աշխատեցա ճիկառա մը շինեմ, անձրևը, ձյունը չթողուր... կթրջեր, կմարեր... ճիկառան աչքիս *թյութմիշ* կըլլար... ինչ որ եղա, ճիկառա չըլլալէն եղա՝ կըսեմ:

- ճղ... ճղ... ճղ... ըսածդ ի՞նչ էր, – հարցուցին:

- ճիկառա ըսել կուգէի, ճիկառա տվեք, չէի կրնար հասկցնել: